ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

R. W. EDWARDS. The Fortifications of Armenian Cilicia. Washington (Dumbarton Oaks Studies, XXIII), 1987, 288 p., 302 c plates, 78 figs.

Ռ. Վ. ԷԴՎԱՐԴՍ, Հայկական Կիլիկիայի բերդերը, Վաշինգտոն *(Դումբարթոն Օքսի ուսումնասիրություններ, XXIII), 1987, 288 էջ, 302c տախտակ, 78 նկ.։*

1198 թ. մինչև 1375թ. տևած Կիլիկիայի հայկական թագավորությունը հայ ժողովրդի պատմության փառավոր շրջաններից է, երբ աննախընթաց զարգացում ստացան գրքարվեստը, ճարտարապետությունը, նոր, նշանակալից ձեռքբերումներ եղան գրականության բնագավառում, իրենց հետագա վերելքն ապրեցին բնական գիտությունները և այլն։ Այսօր այս մշակույթը գերազանցապես ներկայացված է կիլիկյան շրջանում ընդօրինակված ձեռագրերով, որոնք գաղափար են տալիս մանրանկարչական գանձերի, գրականության, պատմագրության, բժշկագիտության, իրավունքի պատմության հուշարձանների մասին։ Սակայն այդ երկերից բացի կա իրական աշխարհագրական Կիլիկիան, որն անմատչելի է բազմաթիվ ուսումնասիրողների համար։ Պատմական այս տարածքի ճարտարապետական կոթողների մասին տարբեր ժամանակներում գրել են Է. Դյուլորիեն, Ղ. Ալիշանը, Հ. Խալփախչյանը, Մ. Ճեվահիրճյանը, Ռ. Էդվարդսը և ուրիշներ։

Բազմաթիվ հոդվածներով է նախապատրաստված Ռ. Էդվարդսի «Հայկական Կիլիկիայի բերդերը» աշխատությունը, որը լույս է տեսել անցյալ տարի, Վաշինգտոնում, Դումբարթոն Օքսի բյուզանդագիտական կենտրոնի միջոցներով։ Այն Կիլիկիայի հայկական թագավորության ռազմական ճարտարապետությունը բնորոշելու առաջին մանրակրկիտ փորձն է։ Գրքի ծավալուն ներածականը բաժանված է մի քանի գլուխների, որոնք վերնագրված են 1) «Պատմական խորք», 2) «Հայկական ամրությունների հատկանիշները. քսան տարբերիչ առանձնահատկություններ», 3) «Կիլիկյան ամրությունների շարվածքը», 4) «Հայկական ռազմական ճարտարապետության տիպաբանությունը», 5) «Արաբական, բյուզանդական և խաչակրաց ռազմական շինարարությունը Կիլիկիայում», 6) «Հայկական ամրությունների ժամանակագրությունը», 7) «Ռազմական ճարտարապետության դերը միջնադարյան Կիլիկիայում. ոչ քաղաքային ստրատեգիայի հաղթանակը»։ Այս գրքում ներկայացված են այժմ կանգուն յոթանասունհինգ ամրոցներ, ըստ Ռ. Էդվարդսի՝ կիլիկյան ամրությունների մեծ մասը, բայց նրա իսկ խոստովանությամբ, հայտնաբերման կարոտ են մնում հայկական շատ բերդեր։ Միանգամայն իրավացի է հեղինակը, երբ նշում է, որ այս շինությունները բազմաթիվ ընդհանրություններ ունեն պատմական Հայաստանի նմանօրինակ կառույցների հետ։ Գրքի ընթերցումից երևում է, որ հայերը տեսական ուժեղ պատրաստվածություն ունեին ռազմական շինարարության ասպարեզում։ Կիլիկիայում բերդերի հատակագծերի մեջ նորամուծությունների բացակայությունն արտացոլում է հայերի թշնամիների պաշարողական գիտելիքների հարաբերական հետամնացությունը, որովհետև ռազմական շինարվեստը միշտ համապատասխանում է պաշարողական պատերազմի բնույթին։ Հայրենիքից Կիլիկիա բերված նախագծերը հարկ չկար կատարելագործելու, որովհետև դրանք լավ էին ծառայում հայերին։ Այդ կոթողներում հանդես են գալիս հայկական ավանդական հատկանիշները Միջերկրականի և Արևելքի անտիկ բերդաշինության ավանդույթների հետ մեկտեղ, ըստ որում վերջիններս հասցված են զարգացման բարձր մակարդակի։ Կիլիկիայի արաբական և բյուզանդական բերդերը հայերի ճարտարապետության վրա էական ազդեցություն չթողեցին, որովհետև դրանց մի մասը գտնվում էր կիսաքանդ վիճակում կամ ծածկված էր նոր շինություններով։ XII դ. հայ բերդաշինարարների համար անհետևանք անցավ նաև խաչակրաց հարևանությունը։ Ռ. Էդվարդսը գտնում է, որ եվրոպացիների համար շատ արդյունավետ եղավ հայոց ամրոցաշինության սկզբունքներին ծանոթանալը։ Կիլիկիայի առանձին բերդերի պարագայում հայերի հեղինակ լինելը հեշտորեն ապացուցվում է շինարարական արձանագրություններով։ Խոսքը վերաբերում է Թամրութի, Սիսի, Մանշիլիկի (Նղի՞ր) կառույցներին։ Կոռիկոսում, Սելևկիայում և Անավարզայում հայերը հիշատակագրություններ

են թողել իրենց վերականգնած ու հայկական ամրություններում։ Միայն այս վեց բերդերում է, որ մնացել են հայերեն արձանագրությունները։ Ռ. Էդվարդսի քննած ամրոցներից քառասունչորսը ամբողջովին հայերի կառուցածն են, որ հաստատվում է կիլիկյան թագավորության շրջանի ժամանակագրությունների տվյալներով։ Այս ձևով է հաստատվում Անավարզայի, Զանդիրի (Պապեռոն), Դեբենի (Կապան), Գյուլեկի (Գուգլակ, Կուկլակ, Գոգուլաթ), Լամբրոնի, Սարվանդիքարի, Սիսի, Վահկայի ծագումը։ Նկատվել է, որ կիլիկյան բերդերի պարիսպները համապատասխանում են իրենց հիմքի ձևերին՝ օրինակ, ժայռերի կորագծերին։ Բնական ժայռապատերը, խութերը, ցցվածքները և բարձունքներն այստեղ օգտագործվում են որպես պաշտպանական միասնական համակարգի մասեր և հակառակորդի սակրավորների քայքայիչ աշխատանքը բացառվում էր, որովհետև պարսպապատերի արտաքին մակերեսին դուրս ցցվող անկյուններ չկան։ Օղակաձև պատերը թե դրսից և թե ներսից կազմված են անմշակ քարերից։ Դրանք թեթևակի դեպի ներս են ուղղված։ Այդ կարգի պատերը սկիզբ են առնում ժայռե հիմքի մեջ փորված ոչ խոր խրամատից և դրանց ներքևի մասը ավելի հաստ է, քան վերևի հատվածը։ Մեծ կայազոր ունեցող ամրոցների ներսում ճարտարապետները երկու բակեր էին նախագծում, որոնք շատ կարևոր էին պաշարման ժամանակ։ Երբ թշնամին գրավում էր ներքևի բակը, պաշտպանները քաշվում էին վերևինը և շարունակում դիմադրել։ Հայկական ամրոցներում գլխավոր կամ մեկուսացած աշտարակներ չէին կառուցում։ Անավարզայում գլխավոր աշտարակի հեղինակները խաչակիրներն են. հայերն այն միայն վերականգնել են։ Հայ բերդաշինարարները կիրառում էին կլոր աշտարակները և խուսափում ուղղանկյուն կամ բազմանկյուն բաստիոններից։ Աշտարակները կիսաշրջանաձև և պայտաձև էին, որպեսզի աղեղնավորները ցանկացած դիրքից կարողանային նետահարել հեռավոր հակառակորդին։ Կիլիկյան բերդերի օրինաչափություններից է օղակաձև պարիսպների և վերին աշտարակների ատամնաձև բնույթը. ըստ սրում, ատամների հետևից պահպանվում էր նեղ անցուղին։ Այս ամրություններում ներքևի բակի գլխավոր դարպասին մոտենալու արահետը կից է օղակաձև պարսպի հիմքին, որ հնարավորություն է տալիս թշնամուն վնասելու վերևից։ Պահակատնից դուրս գտնվող արտաքին ամրությունները հազվագյուտ երևույթ են հայկական ռազմական ճարտարապետության մեջ. որպես կանոն բերդերի վայրը ընտրում էին մեծ բծախնդրությամբ և տեղանքը ստիպում էր հակառակորդին ընտրելու մոտեցման միակ ուղին։ Բերդերի բոլոր մուտքերը պաշտպանվում են աշտարակներից կամ գտնվում են օղակաձև պարսպի ցցված մասում։ Նկատվել է, որ իբրև սկզբունք ամրոցի գլխավոր մուտքն անցնում է պահակատան միջով։ Կիլիկիայի բերդերի մեծ մասում մուտքերը միացնող կամարները հրակնատների անցքերով են օժտված և հնարավորություն է ստեղծված վերևից հարվածելու ներս մտնողներին։ Այս հատկանիշը համարվում է հայկական և գոյություն ունի Վանի բերդում դեռևս VII դ.։ Կիլիկյան ամրոցներում օղակաձև պարսպի և աշտարակների պատուհանները հրակնատի անցքերի ձև ունեն։ Դրանց մոտենում են պատերի միջով անցնող կեռացող միջանցքով։ Լուսամուտների առաջ կան փոքր կամարով խցեր, որտեղից աղեղնավորները կարող էին կանգնած կամ ծնկաչոք դիրքով նետահարել թշնամուն։ Հայկական ռազմական ճարտարապետության մեջ նկատվում է սրածայր կամարներ և աղեղներ կիրառելու հակումը։ Գմբեթներն այստեղ հազվագյուտ են և այդ իմաստով Ցիլան կալեյի ջրամբարը կամ Լամբրոն բերդի բաղնիքը բացառություններ են։ Կիլիկյան ամրություններում կամարակապ գետնահարկերը բազմաթիվ չեն և շարունակվող միջանցքների տեսք չունեն։ Հայկական բերդերում ամենուրեք կան ջրամբարներ, որոնք հորինված են մեծ խնամքով ու շատ խելացի կերպով. այնպես, որ ջրատարը կեռացող գծով իջնի բնական ժայռի մեջ։ Հայերը օղակաձև պարիսպների, աշտարակների պահակատների պատերը կառուցում էին մեծ, լավ տաշված քարերից բաղկացած պարզ շարվածքով, որովհետև հատկապես այդ մասերում էին կիրառում պաշարողական գործիքները։ Կիլիկիայի հայերը բյուզանդացիների նման աղյուս չէին օգտագործում, միայն բերդերի ներսում՝ մառանի կամ ջրամբարի համար էին պահում այն։ Կիլիկյան ամրություններն այս բոլոր ընդհանուր հատկանիշներով հանդերձ, միատեսակ, միանման չեն և բաժանվում են երեք կարգերի. դիտակետերի, ազնվականական ամրացված տների և մշտական կայազորների կայանների։ Փաստորեն բոլոր բերդերը որոշ առումով դիտակետեր էին, բայց դրանց մի մասը շինված էր հատուկ դիտման նպատակներով։ Դիտակետերը փոքր ամրություններ էին, նախատեսված շուրջ հինգ մարդու համար։ Վտանգի դեպքում մոտակա կայազորներին այդտեղից լուր էին տալիս կրակի կամ ձիավոր սուրհանդակների միջոցով։ Նույնպիսի նշանակություն ունեին մեկուսի վանքերից շատերը, որոնցից տեսանելի էին հովիտներն ու ճանապարհները։ Կիլիկյան ամրությունների մյուս մասն ուղղանկյուն բնույթ ունի և պատկանել է մանր ազնվականությանը։ Սովորաբար դրանք երկհարկանի

են և շուրջ 200 քառ. մ տարածություն են գրավում։ Թեև այստեղ կարելի է պատսպարվել և անգամ հրակնատների անցքերից նետեր արձակել հակառակորդի վրա, բայց, այնուհանդերձ, նման ամրությունները խոցելի են թվում և հիմնականում վայելում էին մոտակա կայազորային բերդերի պաշտպանությունը։ Այս կարգի շինությունների շարքում առանձնանում է Տավրոսի լեռներում գտնվող, այսօր Սարը Ցիչեկ կոչվող համալիրը, որն ամառային պալատ է կամ վանք, բաղկացած բազմաթիվ կառույցներից, անգամ մատուռից։

Ուշագրավ է ներկայումս Անդիլ կոչվող բերդը, որը թշնամու հարձակման ժամանակ ապաստան է դարձել հայ արքաների համար։ Կան երկու կառույցներ՝ Թևքեն և Քիզը, որոնք կամ այսպիսի կալվածային տներ են կամ կայազորային ամրոցներ և երկուսն էլ չորս հարկ ու աշտարակներով օժտված անկախ օղակաձև պարիսպ ունեն։ Լրացուցիչ տարածությունը, ինչպես նաև պաշտպանական գծերը, ստիպում են ենթադրել կայազորի գոյությունը։ Ի տարբերություն նման կառույցների, բերդերից առաջինը գտնվում է ծովափին, իսկ երկրորդը՝ հարթավայրում։ Կիլիկյան հայերը եվրոպացիներին տիրույթներ չէին շնորհում լեռներում, ուստի պետք է ենթադրել, որ դրանք խաչակրաց ամրություններից են եղել։ Այդ բերդերի հայկական շարվածքը հուշում է, որ որմնադիրները հայեր էին։ Կայազորային ամրոցները փոքր կամ մեծ շինություններ են, որտեղից լավ դիտելի են զորաշարժերը ճանապարհներին և կարելի է տասը կամ երեսուն մարդկանցով թե՛ դիմադրել և թե՛ պաշտպանել ուղիները։ Ըստ Ռ. Էդվարդսի, հայկական ոճով քառասունչորս բերդերից տասնչորսը վաղ՝ ոչ հայկական շրջանի մնացորդներ ունեն։ Ոչ հայկական երեսունմեկ բերդերից քսանինը կառուցված են արաբների, բյուզանդացիների, խաչակիրների միջոցներով, այդ թվում և Այասն ու Կոռիկոսը։ Սրանցից շատերը մի քանի հայկական հատկանիշներով հանդերձ, հատակագծերով և շարվածքով շատ տարբեր են հայկական շինություններից։ Բայց Դիրի կոչվող ամրոցը հայկական բազմաթիվ առանձնահատկությունների շնորհիվ կարող է հայերի շինածը լինել։ Կիլիկյան տարածքում պահպանվում են հռոմեական կայսրության ժամանակների ամրությունները, օրինակ՝ Անավարզայի և Սիսի ակրոպոլիսները։ Արաբական նվաճման ժամանակ լքված, կիսավեր բերդերը նորոգվել են և համալրվել ռազմական ուժերով։ Այսպիսի ամրացված կենտրոններից են Տարսոնը, Ադանան, Միսիսը (Մամեստիա), Սիսը։ Նույնը վերաբերում է և Անավարզային, որը պետք է IX դ. սկզբին և կեսին ուժեղ վնասված լիներ՝ ենթարկվելով բյուզանդական զորքերի հարձակմանը։ Միայն այստեղ և Տարսոնում կարելի է գտնել արաբական նորոգումների հետքերը, որովհետև Կիլիկիայի արաբական ռազմական ճարտարապետությունից քիչ բան է պահպանվել։ Կիլիկիայի հողում շատ են բյուզանդական շինարարության հետքերը։ Բյուզանդական կառույցներից են Լամասի բերդը, Կոռիկոսի ցամաքային ամրոցը։ Արաբներին քշելուց հետո բյուզանդացիները վերականգնել կամ կառուցել են Անավարզան, Սարվանդիքարը, Լամբրոնը, Վահկան։ Ավելի ուշ հայերի օրոք, դրանք վերանորոգվել են և բյուզանդական հատակագիծը ծածկվել կամ խախտվել է։ Բյուզանդական մասից մնում են միայն օղակաձև պարիսպները։

Ըստ Միքայել Ասորու, Լևոն I-ը ունեցել է վաթսուներկու ամրոց։ Այս փաստը և Անավարզայի ու Կոռիկոսի արձանագրությունները XIX—XX դդ. ուսումնասիրողներից շատերին հիմք են տալիս պնդելու, որ Կիլիկիայի առաջին թագավոր Լևոնն է կառուցել ամրությունների մեծ մասը։ Ռ. Էդվարդսը գտնում է, որ ճիշտ չէ բոլոր բերդերի շինարարությունը կապել նրա ու նրա հաջորդների հետ։ Գիտնականի իրավացի կարծիքով XI գ. վերջին քառորդից Կիլիկիա եկող հայերը չէին կարող կիսակործան ամրոցներում սպասել մինչև թագավորի հայտնությունը։ Թագավորությունը կարող էր ստեղծվել միայն ամրությունների ուժեղ համակարգի կողմից ապահովված քաղաքական և տնտեսական կայունության պայմաններում։ Այս եզրակացության օգտին են խոսում Թորոս I իշխանի Անավարզայում 1111 թ. եկեղեցի կառուցելու, նաև Վահկայում նորոգումներ կատարելու փաստերը։ Լամբրոնին XII դ. կեսին արդեն տիրող Հեթումյաններն իրենց տոհմական ոստանը պետք է որ ամրացնեին ու գեղեցկացնեին նույն այդ ժամանակ։ Ըստ Ռ. Էդվարդսի, Լևոն I-ի ենթակայության տակ եղած վաթսուներկու բերդերը կառուցված էին մինչև նրա իշխանությունը։ Իսկ նրա օրոք և հետագայում՝ XIII դ., ամրոցաշինությունը շարունակվեց նոր թափով։ Միջերկրականի ծովափը՝ Կիլիկիայի հարավային սահմանը, թվում է, թե պիտի լիներ հայկական թագավորության ամենախոցելի թևը։ Բայց իրականում այն բավական դժվարամատչելի էր զորքերը ցամաք հանելու իմաստով։ Ոչ միայն մի քանի ամրացված նավահանգիստների, այլև այն պատճառով, որ մշտական ու ծանր տիղմը և ջրի տակ եղած ավազաթմբերը դժվարացնում էին նավերի ափին մոտենալը։ Հայերը բնակություն չէին հաստատում ծովափին՝ հին լքված քաղաքներում։ Հայաբնակ քաղաքները գտնվում էին երկրի ներսում, ինչպես Միսիսը, Ադանան, Սիսը, Տարսոնը։ Հայերն ապրում էին

երկու նավահանգիստներում՝ Այասում և Կոռիկոսում, ըստ որում դրանցից միայն առաջինն ուներ քաղաքային բնակչություն։ Սարերի վրա իշխելով, հայերը ոչ միայն իրենց տիրապետություն տարածում էին Անատոլիայի ամենարեղուն հողագործական շրջանի վրա, որն աչքի էր ընկնում արգասաբեր բնդերքով, ջրի մշտական պաշարներով, մեղմ կլիմայով, այլև տուրք էին առնում անցնող-դարձող կարավաններից։ Անհրաժեշտ է հիշել, որ Այասով, Սեբաստիայով ու Երզնկայով էր անցնում Եվրոպայից Պարսկաստան գնացող առևտրական գլխավոր ուղին։ Կիլիկյան աբբաներն Այասում գանձվող հարկերից հավաքվող գումարից կարող էին վճարել նոր ամրոցների կառուցման ծախսերը և կայազորների զորականների ռոճիկը։ Կիլիկյան պատմության և մշակույթի քննությունը ցույց է տալիս, որ ապահովության պատճառով հատկապես լեռները և ոչ թե հարթավայրն էր հայկական թագավորության սիրտը։ Դա է պատճառը, որ հայերը մայրաքաղաք Անտարգայից տեղափոխեցին Սիս՝ Տավրոսյան լեռների ստորոտը և թագավորությունն իր գոյությունը շարունակեց շուրջ հարյուր տարի՝ մայրաքաղաքը մամլուքների կողոպտելուց հետո։ Թագավորն ու արքունիքը միշտ հնարավորություն ունեին քաշվելու անմատչելի լեռները։ Զարմանալի չէ, որ գրադարանների, արվեստանոցների ու մանրանկարչական դպրոցների մեծ մասը Տավրոսի վանքերում և ամրոցներում էին։ Ռ. Էդվարդսի գրքում ներածականին հաջորդող բերդերի ցուցակում յուրաքանչյուր շինություն ներկայացվում է բոլոր ճարտարապետական մանրամասներով ու պատմական անցյալով։ Ներածականին հետևող առաջին հավելվածում տրված են կառույցների շարվածքի վրա հայտնվող նշանները։ Երկրորդ հավելվածում բերված են բյուզանդական և կիլիկյան բերդերի շաղախի քիմիական վերլուծության արդյունքները, որոնցից հեղինակը եզրակացնում է, թե հայերն ու բյուզանդացիները տարբեր ձևով էին պատրաստում շաղախը։ Երրորդ հավելվածում անգլերեն թարգմանությամբ ներկայացված է Լևոն I-ի (1198/99) թագադրությանը ներկա ազնվականների ցանկը (ըստ Սմբատ Սպարապետի տվյալների)։ Գրքի վերջում զետեղված տեղանունների և անձնանունների ցանկերը, ինչպես նաև 300-ից ավելի սև ու սպիտակ և գունավոր վերատպությունները մեծ կարևորություն են հաղորդում խնդրո առարկա ուսումնասիրությանը։

Թեմայի բացառիկությամբ, նոր և հարուստ փաստական նյութերի առատությամբ, մեթոդաբանական նոր եղանակներով գիրքը կարող է դասվել հայ ճարտարապետության քննությանը նվիրված լավագույն երկերի շարքը։

Լ. Բ. ՁՈՒԳԱՍՉՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու